ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏԻԿԻՆ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

Զեկուցագիր

Հարգելի տիկին Գասպարյան,

Հայտնում եմ Ձեզ, որ ս/թ փետրվարի 21-ին Վաղարշապատի համայնքապետարանի և <<Երջանկության ճանապարհ>> հասարակական բարեգործական կազմակերպության միջև կնքվեց համագործակցության հուշագիր: Համագործակցության հուշագրի նպատակն է 18-65 տարեկան մտավոր զարգացման խանգարումներ ունեցող անձանց համար առավել ներառական, մատչելի և բարենպաստ պայմանների ստեղծումը Վաղարշապատ համայնքում, մշակութային, կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության ապահովումը, իրավունքների պաշտպանությունը, համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացումը:

Ուստի, համագործակցության հուշագրի կնքմամբ՝ համայնքապետարանը ամենամսյա 100000-ական դրամ պետք է փոխանցի <<Երջանկության ճանապարհ>> հասարակական բարեգործական կազմակերպությանը՝ սոցիալ-տնտեսական և կենցաղային խնդիրները կարգավորելու համար:

Խնդրում եմ ներկայացնել առաջիկա ավագանու նիստին՝ հաստատման համար:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ